## ՑԱՆԿ

## ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1) անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման քարտի պատճենները և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) հինգ գունավոր լուսանկար /3x4 չափի/,

3) կենսագրական տվյալները պարունակող քարտ,

4) նոտարական կարգով հաստատված բանավոր հայտարարություն՝ դատվածության և սնանկության կամ դրանց բացակայության մասին,

5) իրավաբանական կրթության՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ,

6) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ (ատեստատ կամ դիպլոմի ներդիր),

7) պահանջվող օտար լեզուների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ,

8) պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող ապացույց, այդ թվում՝ աշխատանքային պարտականությունները հավաստող պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր,

9) արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ,

10) դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ (տեղեկանքը տրվում է հաշվառման վայրի բժշկական հաստատությունից, ինչպես նաև առանձին տեղեկանքներ՝ հոգեբուժական, թմրաբանական և հակատուբերկուլոզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից (Կառավարության 30.05.2019թ.-ի թիվ 685-Ն որոշում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141551 հղմամբ)),

11) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևով համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այլ տեղեկություններ ստանալու մասին,

12) առավելագույնը երեք երաշխավորագիր-նամակ՝ ըստ հավակնորդի ցանկության,

13) օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր,

14) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ (լրացված հարցաթերթիկի տպված և ստորագրված տարբերակն անհրաժեշտ է ներկայացնել Դատական դեպարտամենտ, իսկ էլեկտրոնային տարբերակը՝ էլեկտրոնային փոստով ուղարկել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի integrity@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին http://cpcarmenia.am/hy/news/item/2020/09/15/154790 հղմամբ),

15) գրավոր հայտարարություն՝ հայտում առկա տեղեկությունների և կից ներկայացված փաստաթղթերի հավաստիության մասին,

16) ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված տեղեկանք՝ միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 106-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին համապատասխանող անձանց համար մասնագիտական աշխատանքի փորձառություն է բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունքի դասավանդումը կամ գիտական հաստատությունում իրավունքի ոլորտում կատարած գիտական աշխատանքը:

**Վերը նշված բոլոր փաստաթղթերի բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել պատճենների հետ միասին:**